ՍԱՆԴՐՈ ԲԵՀԲՈՒԴՅԱՆ

ԽՈՐԵՆ Ա ՄՈՒՐԱԴԲԵԿՅԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՆԴԱՆԻԿ ԿՈՆԴԱԿԸ

1932 թ. նոյեմբերի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեծ դժվարությամբ և բարդ պայմաններում գումարված Ազգային-եկեղեցական ժողովը Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրեց 59-ամյա Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանին:

Նորընտիր Հայրապետի գործունեությունը զուգադիպեց դաժան մի ժամանակաշրջանի, երբ Հայոց Եկեղեցու բնականոն գործունեությանը խոչընդոտող բազմաթիվ հանգամանքներ ու դժվարություններ կային, առկա էին բացահայտ անհանդուրժողականություն, կամայականություն, հալածանք ու բռնություն:

Ահա թե ինչու նորընտիր Հայրապետը չկարողացավ ժամանակին գրել ու հրապարակել իր Անդրանիկ կոնդակը, որը Հայոց Հայրապետների գործունեության ծրագրային փաստաթուղթն է հանդիսանում: Սակայն ինչպես միշտ, այդ օրերին նույնպես իրավազրկված ու կողոպտված Սուրբ Էջմիածինը մնում էր աշխարհասփյուռ հայության անփոխարինելի Սրբություն Սրբոցը, Երուսաղեմի հայոց երանաշնորհ Պատրիարքներից Թորգոմ Գուշակյանի բնորոշմամբ՝ այդ տարիներին Էջմիածինը խոսում էր իր իսկ լռությամբ:

Մենք մեր «Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության» մատենաշարի երկրորդ հատորում, որն ամբողջապես նվիրված է նահատակ Խորեն Ա Կաթողիկոսի կյանքին ու հոգևոր գործունեությանը, ըստ հնարավորին հայտնաբերել և հրապարակել ենք փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, թե ինչպիսի դժվարություններով է հնարավոր դարձել Ազգային-եկեղեցական ժողով հրավիրելը, և ինչ համառությամբ է իշխանությունների կողմից պահանջվել, որպեսզի Խորեն արքեպ. Մուրադբեկյանը կաթողիկոսական թեկնածու չդառնա: Բերենք մի հատված Անդրպետքաղվարչության պետի տեղալակ Լ. Բերիայի և գաղտնի բաժնի վարիչ Մուղդուսու՝ 1930 թ. նոյեմբերի 7-ին Հայաստանի կառավարությանն ուղղված զեկուցագրից.

«... 4/ Արքեպիսկոպոս Խորեն Մուրադբեկյան - Կաթողիկոսի փոխանորդ, անցյալում սերտ կապված էր դաշնակների հետ... տեղեկություններ կան դաշնակների գաղտնի կազմակերպության հետ նրա կապի մասին: Այդ տեղեկությունները ճշտվում են և ստուգվում»[1]:

---

[1] Վավերագրեր Հայ Եկեղեցու պատմության, Գիրք Բ, «Խորեն Ա Մուրադբեկյան, հոգևոր գործունեությունը. 1901-1938», Երևան, 1996, էջ 277:

Երջանկահիշատակ Հայրապետը, սակայն, տնտեսական և հոգևոր-բարոյական առումով այս ծանր ժամանակաշրջանում անգամ հետևողականորեն և խոհական հեռատեսությամբ զբաղվում էր Հայ Եկեղեցու առջև ծառացած բազմաթիվ խնդիրների լուծմամբ:

Այս կոնդակը թեև ուղարկվել է Երուսաղեմի «Սիոն» և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության «Հասկ» ամսագրերին, բայց Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, առաջին անգամը լինելով, 70 տարի հետո՝ այսօր է հրատարակվում այն՝ նվիրվելով նահատակ Կաթողիկոսի ծննդյան 130-ամյակին:

«Ցիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»:

Երջանկահիշատակ Հայրապետը հավատում էր Հայ Եկեղեցու մարտիրոս ոգուն և մեր ժողովրդի սրտին: Հայ Եկեղեցին ոգի է, ուժ է և լույս, և այդ երկնային լույսի ջահակիրներից մեկն էլ եղել է հոգելույս Խորեն Ա. Մուրադբեկյան Կաթողիկոսը, որի գործունեությունը թեև կասեցվեց, բայց մեր Եկեղեցու պատմության մռայլ օրերին անգամ նա կարողացավ ժամանակակիցներին փոխանցել մեր նախորդ Հայրապետներից իրեն ավանդված «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» խոսքերը: Նահատակ Կաթողիկոսն ապրեց հպարտ ու ընթացավ անսայթաք և գործեց անձնազոհ: